ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/158

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Հովասափյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 01Ա029342)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.09.2019թ. թիվ /26-1/15516-2019 գրությամբ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 13.09.2019թ. թիվ 17/16.4/5397-2019 գրության հիման վրա, 19.09.2019թ. թիվ /26-1/15516-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՀԳՇՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.09.2019թ. թիվ ՎՀ-141 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունն ունի մոտ 50 տարվա աշխատանքային փորձ: Աշխատում է շուրջ 80 մշտական գործող մասնագիտական անձնակազմով, ունի հորատող մեքենաներ, երկրաբանական լաբորատորիա և այլ սաքավորումներ, հարուստ նախագծային և երկրաբանական հետազոտության փաստաթղթերի արխիվ: Աշխատում է քաղաքաշինության բնագավառում: Հանդիսանում է Հայաստանի նախագծման ասպարեզում գործող մեծ ընկերություններից մեկը: Հեռանկարային կադրերի պատրաստման նպատակով Ընկերության գործունեությունում ներառված է նաև երիտասարդ կադրերի մասնագիտացման գործընթաց քաղաքաշինության տարբեր բնագավառներում՝ ճարտարապետության, ինժեներական կոնստրուկցիաների, ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, հիդրոտեխնիկական:

Համաձայն ընթացակարգի հայտերի բացման արձանագրության՝ Ընկերությունը զբաղեցրել էր 3-րդ տեղը: Որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից Ընկերության կողմից Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ էր հանդիսանում 11.09.2019թ.: Փաստաթղթերը ներկայացվել են սեպտեմբերի 13-ին: Մեծաքանակ մրցույթների նախապատրաստման պատճառով Ընկերության մասնագետն ուշադրությունից դուրս է թողել տվյալ մրցույթը և թյուրիմացաբար խախտվել էր ժամանակին փաստաթղթերի ուղարկման ժամկետը, թեև փաստաթղթերը պատրաստվել և անձնակազմի համաձայնությունները ստորագրվել էին սեպտեմբերի 9-ին, որից կարելի է եզրակացնել, որ Ընկերությունը մտադիր չի եղել հրաժարվել կամ ուշացնել փաստաթղթերի ներկայացումը: Առավել ևս, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի նախագծումն Ընկերության համար հետաքրքիր էր, քանի որ ընդգրկում է գյուղատնտեսական նշանակության օբյեկտներ, որտեղ Ընկերությունը հատկապես փորձառու է և շահագրգիռ իրականացնելու այդ աշխատանքները:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել, որ վերջինս շարունակում է համագործակցել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ և ներկա պահին ունի շահած օբյեկտ, որի համար ներկայացվել են պատշաճ փաստաթղթեր:

Իր բազմամյա փորձի և անձնակազմի շնորհիվ Ընկերությունը զգալի ներդրում ունի քաղաքաշինության բնագավառում:

Ընկերությունը հասկանում է, որ գնումների գործընթացից դուրս մնալը կհանգեցնի նախագծման ծավալի աննախադեպ նվազեցման և մրցունակության արհեստական կորստի:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.10.2019թ. թիվ ՎՀ-160 գրությամբ Ընկերությունը խնդրել է քննարկման առարկա դարձնել այն հանգամանքը, որ Ընկերության հայտի թիվ 2.1 հավելվածը՝ իրական շահառուների մասին տվյալները, ի սկզբանե ներկայացված էր սխալներով, ուստի Ընկերությունը չէր կարող ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած:

Նշված հավելվածում ներկայացված է Ընկերության շահառուների կարճ ցուցակը, որոնք ենթադրաբար մասնակցելու էին տվյալ ծրագրի իրականացմանը: Շահառուների ամբողջական թիվը 27-ն է, որոնցից Վարուժան Հովասափյանի բաժնեմասը կազմում է 73,78 %, իսկ մնացած մասնակիցների բաժնեմասերը տատանվում են 0,2-ից մինչև 1,30 %:

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/158 ընթացակարգի շրջանակներում 26.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.09.2019թ. թիվ 17/16.4/5397-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի հուլիսի 30-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների

բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել և հաջորդաբար տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՀԳՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև 01.06.2019թ. գործող, հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությանը ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում նշված փաստաթղթերն ընդհանրապես չեն ներկայացվել:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/158 ընթացակարգի շրջանակներում 26.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2019թ. նիստի թիվ 3-3 արձանագրության համաձայն՝ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2019թ. նիստի թիվ 3-4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.09.2019թ. թիվ /26-1/15516-2019 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 13.09.2019թ. թիվ 17/16.4/5397-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2019թ. նիստի թիվ 3-3 արձանագրության համաձայն՝ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2019թ. նիստի թիվ 3-4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Այսպիսով՝ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ն հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացրել:

Միևնույն ժամանակ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Ընկերության կողմից հայտի թիվ 2.1 հավելվածը՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները, որի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի

անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի 8-րդ պարբերությամբ սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում:

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2.1 հավելվածով ներկայացրել է թվով յոթ իրական շահառուների մասին տվյալներ:

Ընկերության՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 30.06.2017թ. գրանցված փոփոխված կանոնադրության հավելվածի համաձայն՝ Ընկերության մասնակիցների թիվը **27-ն** է, որոնցից Վարուժան Հովասափյանի՝ Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը կազմում է **73.78 %**, իսկ մյուս բոլոր մասնակիցների բաժնեմասերը տատանվում են **1,2168% - 1,30%** -ի սահմաններում:

Ընդ որում՝ Ընկերության կողմից հայտի թիվ 2.1 հավելվածով որպես իրական շահառու ներկայացված 7 անձինք նույնպես հանդիսանում են Ընկերության կանոնադրության Հավելվածում նշված մասնակից, այդ թվում նաև՝ Վարուժան Հովասափյանը, ով ունի

Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասերի 73.78 %, իսկ մյուս վեց մասնակիցների բաժնեմասերը կազմում են 1,28%-1,30%:

Նման պայմաններում, հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջը, գտնում եմ, որ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված թիվ 2.1 չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհապատասխանություն արձանագրվելու դեպքում (բացառությամբ գնային առաջարկ և հայտի ապահովում), մասակցին տրամադրվում է մեկ աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար, ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Նման պայմաններում, հաշվի առնելով Ընկերության հայտի թիվ 2.1 հավելվածում առկա անհամապատասխանությունը, ինչպես նաև Կարգի 41-րդ և 42-րդ կետերով նախատեսված ընթացակարգերը, գտնում եմ, որ սույն ընթացակարգի շրջանակներում բավարար հիմքեր առկա չեն «ՀԳՇՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու համար, քանի որ Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելու և Կարգի 42-րդ կետի համաձայն անհամապատասխանությունը չշտկելու դեպքում Ընկերության հայտը կմերժվեր դեռևս հայտերի գնահատման առաջին փուլում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.09.2019թ. թիվ /26-1/15516-2019 գրությամբ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**